«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵ

Հասցեատեր՝
Դիլիջան UWC
Էլեկտրոնային փոստի հասցե՝ sports-and-outdoor@uwcdilijan.am

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20.11.2025թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Արփի Լազարյան
	Հենրիկ Խաչատրյան
	Նարեկ Ադամյան
	Դավիթ Բակլաչյան

Վարույթ՝	ՍՖԱԲ Բ-009
Խախտում՝	1. Առաջնության խաղի ժամանակահատվածում «Դիլիջան UWC.» թիմի ֆուտբոլիստ Ջուլիո Լուկա Սաբատինի (61661) կողմից ոչ սպորտային վարքագիծ դրսևորելը, որը մարզադաշտում պատճառ է դարձել անկարգությունների, որի պատճառով խաղը չի շարունակվել (Հավելված 1 Խ, 8-րդ կետ) 2. Դաշտի տեր թիմի կողմից խաղի ժամանակահատվածում մարզադաշտում կարգ ու կանոն չապահովելը, անհարգալից արարքներ թույլ տալը (Հավելված 1 Խ, 14-րդ կետ)
Առաջնություն՝	ՍՖԱ Ա լիգա 2025/26-Ա խումբ
Խաղ՝	«Դիլիջան UWC.» - «Վաչիկ», 16.11.2025թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. «Դիլիջան UWC.» թիմի ֆուտբոլիստ Ջուլիո Լուկա Սաբատինին (61661) որակազրկել 2 (երկու) խաղով: Որակազրկումը տարածվում է 2025 թվականի նոյեմբերի 21-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում): Դիլիջան UWC-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով: «Դիլիջան UWC.» թիմին գրանցել տեխնիկական պարտություն՝ 0:3 հաշվով:
2. Դիլիջան UWC-ին տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի՝ 20,000 ՀՀ դրամի չափով:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (disciplinary@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 50,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: